Հրոխպէրներս կուշտ, ըսեց.—Ցո՞րի իք էկի։
Ըսեցին.—Քու հէր սպանեցին, էկեր ինք քըղի տանինք։
Հարցուց թէ՝—Ո՞րն է սպանէ իմ պապուն։
Ընդոնք լէ ըսեցին թէ՝—Զմկկեր սուլթանի ախչիկն է սպանի։

Առան Մհերին ու գացին[1])։

Տարան, Դաւթի շորեր հագուցին, ու Դաւթի սիլահ կապեց վրէն. ձին լէ քաշին, բերին էդ տեղ, ու Սրի Նշան համբուրեց, դրեց ծոց, ու ընկաւ էրկրներ ջարտել. էլ թաց ու չոր չհարցու։

Քշեց Զմկկեր սուլթանի քաղքի վրէն. Խոր-Մանուկ[2]) լէ հետ տարաւ. Զմկկեր սուլթանի քաղաք աւիրեցին[3])։

Ու էդ տեղէն առան, գացին ուրիշ քաղքի[4]) մի վերայ. գացին, տեսան, օր էդ քաղաք իսկի մարդ չ'կէր. Մհերի ահուց բիրադի փախած էն սարեր։

Տեսան էդ քաղքի մէջ մէկ բուխերկից ծուխ կ'էլնէր. քշեց

---

[1]) Ա. վարիանտով՝ Մհեր լսելով հօր մահը, վաց ու քիթ ու բերնի վրէն ընգաւ. եօթ օրից յետոյ միայն տեղից վեր կացաւ և գնաց Սասուն։

[2]) Ա. վարիանտով՝ Մհերին միանում է Ճոռ-Վիրապ կամ Խոր-Վիրապ. պատմողը շփոթում էր այստեղ այդ երկու անունները։ Խոր-Մանուկը Քեռի-Թորոսի որդին է, բայց Խոր-Վիրապի և Ճոռ-Վիրապի ծագումը յայտնի չէ վարիանտի մէջ։

[3]) Բ. վարիանտով՝ Մհերը իւր հօր հոգին հոգալուց յետոյ, տէրտէրի հագուստով ծպտուած՝ գնում է Խլաթ. պատահում է Սուլթան Գրմիժին, որ ջրաղացի քարը «քարման» (իլիկ) էր շինել և թել էր մանում։ Մհեր ճանաչում է նորան և տեղեկանալով, որ, հօրն սպանելուց յետոյ, իրեն էլ է ուզում սպանել, խորամանկութեամբ իւր մօտ է կանչում և երկու կտոր անում։ Աւերում է Խլաթը, մի կատու էր մնացել, նորան էլ Զինով-Ցոլվանի օգնութեամբ «թունդրան ակից» հանելով՝ սպանում է։

[4]) Ա. վարիանտով Մհեր միայն մի քաղաք՝ Խլաթն է աւերում, և այստեղ են լինում մի տէրտէր իւր կնոջ և դստեր հետ (Փիրմուս, Դեղձոն)։